ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 4107-Ա « 10 » հոկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈՒԲԱՅ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով ԱՄԷ-ի միջազգային համագործակցության նախարար, Expo City Դուբայի գործադիր տնօրեն Ռիմ Ալ Հաշիմի 25.10.2024 թվականի ստացված հրավերը՝ 2025 թվականի Ասիա - Խաղաղօվկիանոսյան քաղաքների համաժողովին (2025APCS), ինչպես նաև քաղաքապետերի համաժողովին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը 2025 թվականի հոկտեմբերի 26-ից 30-ը ներառյալ գործուղել Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաք հետևյալ կազմով.

Տիգրան Ավինյան	Երևանի քաղաքապետ
Սոնա Թևանյան	Երևանի քաղաքապետի խորհրդական
Դավիթ Գևորգյան	աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ
Մալվինա Պողոսյան	աշխատակազմի լրատվության վարչության սոցիալական մեդիա համակարգող

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին, բացառությամբ Երևանի քաղաքապետի ավիատոմսի և գիշերակացի, որը հոգում է հրավիրող կողմը:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանի բացակայության ընթացքում արտաքին կապերի վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության արարողակարգի բաժնի պետ Լուսինե Ղարիբյանին:

4.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ